


ԴՐՈՇԱԿ



„ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Ա Ր Ա Մ Ա Ր Ա Մ Ե Ա Ն

Յուլիս 2-ին (ն. տ.) Բասէնի Վէօփրի-Ֆէօյ գիւղում ձերբակալւած և Վարնոյ բանտն է տեղափոխուած մեր թանկագին ընկեր՝ կարնեցի Արամ Արամեանցը (Աշոտ, Թաթուլ):

Հարցաքննութեան ժամանակը Արամը ամենայն համարձակութեամբ խոստովանել է իր յեղափոխական լինելը ու պարզել է Պաշնակցութեան նպատակը:

Նրան մեղադրում են, որ իբր 150 հոգով սահմանն է անցել Շաքիր փաշային իր հետևորդների հետ միասին սպանելու դիտաւորութեամբ. մեղադրում է նոյնպէս Խաչատուր Աէրէկցեանի սպանման մէջ:

Արամին բանտի մէջ ենթարկում են սոսկալի տանջանքների: Նա պաղարհունութեամբ սպասում է իր դատավճռին:

Վ Ա Ն Ա Յ Ն ՈՐ Կ ՈՒ Ի Ը

Ինչպէս յայտնի է յունիսի Վանայ հուշակաւոր կըուսից յետոյ Վարագայ լեռը ապաստանած դաշնակցական խմբերի մի մասը միայն Պետոյի առաջնորդութեամբ՝ նահատակեց դէպի Պարսկաստան տանող ճանապարհի վրայ. իսկ միւս մասը քաղաք իջաւ ժողովուրդը բոլորովին անպաշտպան չթողնելու համար: Ծածիկ կառավարութիւնը ապշած տեսաւ, որ ոչ քաղաքի աւերելը, ոչ թնդանօթներով ու մարտիկներով և ոչ յեղափոխականների հարիւրներով կոտորելը վերջ չէ գնում յեղափոխութեան: Նորընտիր քրիստոնեայ դարձնորդիչների՝ բերանով կառավարութիւնը աղէտական հնարքներով հրաւիրում էր մեր ընկերներին դալ ու անձնատուր լինել, խոստանալով յամեն տեսակ ապահովութիւն: Սմեն տեսակ ապահովութիւն՝ վայելելու փոխանակ, յեղափոխականները սկսեցին աւելի բազմանալ ու երկրի մէջ սկսեցին իրենց գալ նորանոր գնեւած յեղափոխական խմբեր:

Սեպտեմբեր 10-ին (հին տոմար) յանկարծ վերսկը-

տում են թաղական խուզարկութիւնները և գտնում են այն տունը, ուր պահուած են լինում մեր ընկերները: Տեղի է ունենում ընդհարում. կռիւը տևում է ամբողջ օրը: Միւս օրը տղերքը փոխում են իրենց տեղը և միանալով միւս ընկերների հետ՝ երեք տուն են բռնում: Այնտեղ էլ քաջաբար կռուելով ամբողջ օրը անցնում են սարերը: 300 զինուոր հետևում են նրանց, բայց մի քանի կորստաբեր կռիւներից յետոյ քաղաք են վերադառնում: Զինւորների կորուստը ահագին է, տղերանցից ընկել են 7-8 հոգի: Ծողովուրդից մարդ չէ վնասւած:

Մեր ստացած հաւաստի տեղեկութիւնների հիման վրայ (տեղեկութիւնները հաւաքւել են գիւղէ գիւղ) յայտարարում ենք, որ Վասպուրականում յունիս ամսին տեղի ունեցած կոտորածների ժամանակ հայ զոհերի թիւը չէ անցնում 6000-ից: Վան քաղաքի մէջ հայերի և տաճիկների զոհերի թիւը հաւասար է: Հայերից ընկածները անզեն, անպաշտպան, կայր, կաղ մարդիկ են եղել:

„Բերլինը Ծագէբլատ“-ին հեռագրում են Վ. Պոլսից հոկտեմբեր 23-ին. Պանում մեծ խառնակութիւններ են տեղի ունեցել: Ահագին թւով զինւած հայեր (ըստ լուրերի՝ մօտ 6000 հոգի) յարձակւել են թըրքական բերդապահ զօրքի վրայ և ծանր կորուստ են պատճառել նրան: Վալին հեռագրով մեծ զօրք է պահանջել ապստամբութիւնը ճնշելու համար:

Դ Ա Մ Բ Ի Ծ Զ Ը Շ Ե Ղ Ի Ե Ն Ք

Դեռ թարմ է այն օրերի յիշատակը, երբ մրափում էինք ստրկական բնով, երբ մեր բռնակալները ըրկ արհամարհանքով էին արտասանում մեր անունը և մարդկութեան մեծ մասը մեզ մի սարուկ և իդէալներից զուրկ ազգ էր համարում:

Այսօր ամեն բան փոխւել է, բռնակալները մեզից

ակնածում են, մարդկութեան լաւագոյն մասը սկսում է համոզւել, որ հայը զգւել է ստրկութիւնից, ազատութեան ծարաւ ունի, վառ ցանկութիւն իր արժանաւոր դերը կատարելու մարդկային պատմութեան մէջ և այդ իրագործելու համար պատրաստ է ամեն զոհողութեան:

Հայ ժողովուրդ, գիտես այս փոփոխութեան պատճառը. պատճառն այն է, որ դու ընկար յեղափոխական ճամբէն, արտադրեցիր յեղափոխական տարրեր, որոնք զէնքերը ձեռքերին հերոսաբար պաշտպանեցին քո ազգային պատիւը և քո մարդկային իրաւունքները: Թըշնամին զգաց քո յեղափոխական ուժը, վճռեց մի հարւածով արմատախիլ անել նրան և կանգնեցնել իր անկումը: Վճռեց և փորձեց. նրա հարւածը ընդհանուր և սոսկալի եղաւ... դու շարեցիր:

Բռնակալն ուրախացաւ, դիպումատները հրճանքով ձեռքերը շփեցին և կարծեցին թէ վերջնականապէս ազատւել են հայկական կնճռոտ հարցից, որը չարագուշակ ուրւականի նման վրդովում էր նրանց հանգիստը՝ նոյն իսկ իրենց շքեղ պալատներում:

Մոլորւեց մինչև իսկ հայ յեղափոխականների մի մասը. նրա պարագլուխները այնքան ընկան, որ յետ նահանջեցին և սկսեցին ջրել իրենց տարիներով քարոզած սկզբունքները ու լալ...

Դէս ու դէն շաղ ընկած, հայ ժողովուրդի ցաւերով չայրւած, նրա դրութեանը բոլորովին անծանօթ, քաղաքացիական արիութիւնից զուրկ հայ ձուռմաբաններն էլ սկսեցին անիծել հայ յեղափոխականներին և կոկորդիլոսի արցունքներ թափել իբր թէ մահացած հայ ազգի շիրմի վրայ... Թշուառներ:

Մեր երկրում տիրեց խորհրդաւոր լուութիւն: Սև-սև ամպերը ծածկեցին մեր երկինքը: Վարձատեսները չէին հասկանում այդ չարաբաստիկ լուութիւնը...

Բայց յանկարծ հայը որոտաց և աւելի կատաղի կերպով ցնցեց իր շղթայակապ վիզը: Սառսուեց բռնակալը իր թախտի վրայ, մայրաքաղաքը տակնուվրայ եղաւ, շշկւեցին խելօք դիպումատները, դըրդաց ամբողջ աշխարհը և ապշեց հայի կորովի վրայ:

Ոչ մի ժամանակ հայը այսքան համակրանք չէր գրտել. այդ նրա համար է, որ հայը այս վերջին շարժումով բարոյական աւելի մեծ ոյժ ցոյց տւեց և որոշակի յայտարարեց՝ կամ մե՛զ ազատութիւն, կամ ընդհանուր դժբախտութիւն...

Ուշքի եկ հայ ժողովուրդ, դիւժիր աւելի ու աւելի. սո՛ւր մեզ ձեռքդ, դնանք նոյն ճամբով, որով գնացին քո լաւագոյն զաւակները՝ Պետո, Բաբկէն, Գնունի, Արտաշէս և ուրիշները, որոնց անմահ հոգիները մի-մի վառ աստղ դարձած լուսաւորում են մեզ, որ մենք մեր ճամբից չը շեղւենք:

Խ Ա Ս - Գ Ի Ի Ղ Ի Կ Ո Տ Ո Ր Ա Մ Ը

Բաւական ժամանակ անցած է այն տխուր օրերէն ի վեր, տխուր օրեր, որ այնքան արցունք մեր աչքերէն խլեցին: Ամբողջ ամիս կը սահած է այդ սաքսափի օրերէն ետքը, բայց վէրքը խոր և արիւնը դեռ պաղած չէ: Պիտի կրնամ արդեօք նկարագրել-բոլոր տեսած ու լսածներս:

Ժամը երկուքին (ը. թ.), յանկարծ Պատէմլիք կը պաշարէր քիւրդերէ, լազերէ ու հրեաներէ: Աւարն ու ջարդը կսկսէր: Ամեն մէկ տուն յարձակում կը կրէր անուաղն 30-40 հոգիէ: Բիրբերով, սուրբերով և րէվոյ վէրներով զինւած՝ աւաղակները կը յարձակէին տուներուն վրայ, երկաթէ թակերով, վայլօզն երով ու մանա վելան երով դռները կը կոտորէին ու ներս կը խուժէին՝ «վարուն կեալուրլարը» (կոտորեցէք քրիստոնեաները) պոռչտալով սովալուկ գայլերու նման, կը վազէին իւրաքանչիւր յարկ, բիրբերու և սուրբերու հարւածներուն տակ կոտոր-կոտոր կընէին արուները, իսկ կիներուն վրայ կը խուզարկէին՝ ստակ կամ թանկագին առարկաներ գտնելու յուսով, երբեմն ալ կը սպառնային անոնց՝ «էրբէքլէրինիդի կէստերին» (էրիկ մարդիկնիդ ցուցուցէք) ըսելով: Արունները սպանելէ յետոյ՝ աւարի կսկսէին: Ամեն մէկ կողմ կը պըրպտէին և կը կոտորէին այն բաները, զորս կամ անարժէք կը գտնէին և կամ դժւար փոխադրելի:

Սոսկալի է տեսարանը: Նշան-Թաղը և Հայոց գերեզմանատունը խոնւած է մահմեդական ու հրեայ խուժանքով, որ մոլեռանդութեամբ և ընչաքաղցուցութեամբ տոգորւած՝ կը յարձակի հայուն, կեալուրին վրայ: Հետզհետէ կը լայննայ աւարառուններուն ու մարդասպաններուն հեղեղը. Գասրմ-փաշայէն, Պալատէն, Էյուպէն և ուրիշ տեղերէ մարախի նման կը թափին խոսքեղ, այդ մենացեալ և կեղրոնէ հեռու գիւղը, և աւաղակապետին Համիտին տաճ. հրամանին համեմատ, անխնայ կը ջարդեն հայերը, անձիտել կը ջանան այդ վնասակար մարդերը: 24 ժաման արտօնութիւն տըրւած է հայերը ջարդելու համար. պէտք է աճապարել ժամ առաջ մէջտեղէ վերցնելու զանոնք: Ամբողջ գիւղը կը պարաւանդեն ձիււոր զօրքերը, որոնք պարզապէս հանդիսատես կըլլան և կը խրախուսեն քիւրտերը «հա՛ օլլում, հա՛ արսլանըմ, չափուգ, վագըթ կէշիօր» (ճն, տղաքս, առիւծներս, շուտ, ժամանակը կանցի) ըսելով: Քիւրտեր այս քաջալերութիւններէն օգուած՝ իրենց ուժերը կը կրկնապատեն. վաթսուսական, հարիւրական հոգի կը յարձակին իւրաքանչիւր տան վրայ, կը ջարդեն, կը կոտորեն: Կառքերն ու բռնակիրները ճամբայ կելլեն դէպի Գասրմ-փաշա, Գարա-Աղաձի Հարմաններ—Խաս-գիւղի հրեաներուն և թըքերուն տները: Նոյնպէս կահ կարասիներով լեփլեցուն մաւունաներ ու նաւակներ կերթան Պալատ և Էյուպ:

Խեղճ պատէմլիկցիները չէին կարող բան մը ընել այս պատուհասին առջևը առնելու համար: Ոմանք տունէ տուն կը փախչէին, ոմանք ջրհորներն ու առատաղները կապաստանէին, և ուրիշներ ալ պարտէզներու մէջ, ծառերու վրայ և կամ անտեսանելի տեղեր կը պահուէրէին: Բանի մը տուններէ սաստիկ դիմա-

դրուածիւն եղած է մինչև առաւօտ. քարաշէն տուն մը, ուր հաւաքուած էին բաւական ընտանիքներ, քանի մը ատրճանակներով ու իր կղմիաներովը յաջողած է մինչև առաւօտ դէմ գնել քիւրդերու ահագին խմբերուն, որոնք անձի մեծ կորուստներ տարով՝ ետ քաշուած են: Միայն հետեւեալ առտուն, երբ տնեցիք, առանց ուղ-մամթերքի մնացած, եկեղեցին կապաստանին, քիւրդերը կը յարձակին տան վրայ և ջարդ ու փշուր կընեն ամեն բան:

Վողոյտիչներն ու մարդասպանները, Պատէմլիքը թալ-լիէ ետքը կը նետուին Եէնի-Մահալլէի և Եկեղեցի-փողոցի վրայ, կը ջարդեն, կը կողոպտեն ու կը թալլեն և մինչև եկեղեցի կը յառաջանան: Մեր չորս մարդե-րը կապառնան (Եկեղեցւոյ մէջ 7 հոգի էինք) կրակ ընել քիւրտերուն վրայ, սակայն կողոպտուող հայերը կաղաչեն, կը պաղատին, որ տղայքը հանդարտ կենան և զէնք չբաշեն. «ոտուրնիդ պահնիմ՝ գաւակներս, կը սեն, կրակ մ'ընէք. թող անոնին տանին մեր մաշն ու միւլքը, աման զաւակներս, մ'ընէք, հոգինիս ազատիք»։ Տղայք կը լռեն, և քիւրտերը կը կողոպտեն տունները ու կերթան:

Այսպէս, գիշերուան ժամը 2-ին մինչև առաւօտ, քիւրտերը, թիւրքերն ու հրեաները տեղուտ ողբերու-թեամբ, կողոպտեցին ու թալլեցին Պատէմլիքը, Ենի-Մահալլէն և Եկեղեցի-փողոցը: Եէնի-Մահալլէի մէջ, տունէ մը բաւական փնաս հասցուցած են քիւրտերուն սպաններով 10-15 հոգի: Ծեր մարդ մըն ալ, որ չորս փամփուշտ և ժանգոտած ատրճանակ մը ունէր, երկու հարւածով տապալած է երկու քիւրտ և յետոյ ինք ալ սպաննուած ահագին խուճբ մը քիւրտերէ:

Չրգ-Սալընը մինչև առտու ազատ մնաց ջարդէ ու կողոպուտէ. հոս շատեր չէին գիտեր, թէ ի՛նչ տեղի կունենար Պատէմլիքի մէջ և ուրիշ կողմեր երբեմնե-րեմն կը լսէին վայնասուններ, ճիւղեր ու ատրճանակի ձայներ. նաև խուճբ-խուճբ քիւրտեր, բիրերով և լախ-տերով դնուած՝ կանցնէին կերթային դէպի Պատէմլի-քի կողմը. ամեն մարդ արթուն էր, վախի և մտատան-ջութեան ենթակոյ: Բազմաթիւ հրեաներ անկողիններ ու կարասիներ շարկած՝ կանցնէին Չրգ-Սալընէն ու կերթային բուն Խաս-գեղը, հրեաներուն բնակած թա-ղը: Չրգ-Սալընի հայերը կը կարծէին թէ հրեաները կը փախչին քիւրտերու առջևէն, մինչդեռ անոնք աւար ու կողոպուտ կը տանէին իրենց տունները:

Արևուն ծագման հետ յարձակուով սկսաւ Չրգ-Սա-լընի վրայ. քիւրդերը իրենց ամբողջ ոյժը կեդրոնա-ցուցին անոր վրայ: Ժողովուրդը սկսաւ փախչիլ դէպի եկեղեցի՝ տունները թողով քիւրդերուն ձեռքը: Չրգ-Սալընի հայ երիտասարդներու խուճբ մը, միայն փողոցի քարերով դիւնուած, յաջողեցաւ բա-ւական ժամանակ ետ մղել ու փախցնել քիւրդերու ահագին փոհմակներ, սակայն տեսնելով, որ իր տրա-վադրութեան տակ պէտք եղածին չափ քար չունի և ամեն կողմէ կը պաշարւի, կրցած է ձեղքել թշնամին ու փախչիլ եկեղեցի:

Այսպէս, խեղճ Խասգիւղը 10-20 ժամ կողոպուտի և ջարդի ենթարկուեցաւ, և Պարոյ թաղերուն մէջ ամենէն մեծ հարւածը կրեց: 800-ի չափ հայոց տունե-րէն հազիւ 15-20 հատ գերծ մնացած են կողոպուտէ: Վողոյտուտի մասնակցողներու մէջ նշանաւոր եղան հրեա-

ները, որոնք քիւրդերուն ու թիւրքերուն գլուխն ան-ցած՝ մատնանիչ կընէին հայոց տունները, կաւիճով կը գրէին դռներուն վրայ, և իրենց ձեռքը ինկած կահ-կարասիները կը փոխարէին իրենց տունները: Պէտք է լսել սակայն, թէ գտնուեցան խիստ սակաւաթիւ լու-սամիտ թիւրքեր, որոնք պատասպարեցին բաւական ըն-տանիքներ իրենց տուններուն մէջ: Ճ ա մ Ճ ի Հ ի ւ ս ն ի ա Ղ ա 20-ի չափ հայ պահած է իր տունը և քանի մը օր կերակրած: Միւսիճէի կողմը քանի մը թիւր-քեր իրենց տունն ընդունեցին պատէմլիքի ընտանիք-ներէն ոմանք: Չրգ-Սալընի պահականոցին Բ օ լ ի ս 2 ա ռ ու շ ի ն բազմաթիւ հայեր պահպանած է պա-հականոցին մէջ, և ջարդին առաջքը առնելու համար, զինուոր ուղած է գիւղին հարիւրապետէն, որ արհա-մարհած է զայն, «սաման գայրըը իլէ եոլլատըմ» (յարդի նաւակով ձամբած եմ) պատասխանելով:

Հինգշաբթի առտու կանուխ եկեղեցին ենք երեք ընկեր: Ջարդէն ազատած հայերը հւիհսե կը վազեն եկեղեցի՝ ապահով պապաստնարան գտնելու համար հոն: Ի՛նչ սրտաձմիկ տեսարան... գունատ և դիւահարի գէմքեր են, որ ներս կը մտնեն, լեղապատառ մանուկ-ներ ու օրիորդներ, որոնք նւաղած կիցնան. «հայրս, հայրս» կը պոռայ մէկը, անգին ուրիշ մը՝ «ան, զա-ւակս ո՞ր է... Հետզհետէ կը հասնին այրեր, կիներ, մանուկներ, ծերեր, որոնք ճչեր ու վայնասուններ ար-ձակելով՝ ինքզինքնին եկեղեցիէն ներս կը նետեն: Մին-չև իրիկուն, ահագին եկեղեցին կապաստանին 2-3000-ի չափ մարդեր: Սակալի է, որ 800-ի չափ գաւառացի-ներէն հազիւ 50 հոգի կը գտնուին, միւսները սպան-նուած են հարմաններուն մէջ, տունները և ձամբան:

Երեք ընկեր խորհեցանք, որ 3000-ի մօտ բազմու-թիւնը պաշտպանելու համար, պէտք էր ատրճանակնե-րը ժողովուրդին ձեռքը տալ, քանի որ չունէինք մեր ընկերներէն մեկ-երկու հոգի, որոնք բացակայ էին: Ուստի, 40 ատրճանակները վարժ ու քաջ երեսասարդ-ներու յանձնեցինք, որոնք փախչուուն զէնքերը տեսնե-լով և մեր պատուէրները լսելով՝ սկսան շունչ ու ոգե-ւորութիւն առնել: Ժողովուրդը հանգստացաւ քիչ մը:

Քիւրդերն ու ոստիկանները եկեղեցիէն բաւական հեռու կրնային գալ և անկից ասդին չէին համարձա-կեր. անգամ մը միայն քանի մը քիւրդեր մինչև եկե-ղեցիին մօտ հալածեցին հայ ընտանիք մը, սակայն մեր ընկերներէն մին մէջ մը պարպեց և քիւրդերը անհե-տացան: Ոչ ոք դուրս կելլէր եկեղեցիէն, դուռները ամ-րանպէս փակ էին, միայն մեկ դուռը կը բացւէր՝ ժո-ղովուրդը ներս առնելու համար:

Հինգշաբթի օրը յարձակում չեղաւ եկեղեցիին վրայ, սակայն քիւրդերն ու թիւրքերը կը վխտային Պատէմ-լիքի, Ենի-Մահալլէի և Չրգ-Սալընի պարսպ տունե-րուն մէջ և փողոցները, ուր հայ կը փնտռէին սպան-նելու համար: Գիշերը անցուցինք խաղաղ: Ուրբաթ օրը մինչև իրիկուն եկեղեցի եկան անոնք, որ ապահով տե-ղեր պատասպարուած էին, որով եկեղեցին լեցաւ. մինչև իրիկուն ո և է դէպք չպատահեցաւ: Գիշերը, ժամը 5-ին, յանկարծ դուրսէն ատրճանակի ձայներ լսուեցան, որոնց սկսան պատասխանել մեր տղաքները: Ահագին խժժուք ու իրարանցում եկեղեցիին մէջ: Կոտորածին ու թալանին ենթարկուած ժողովուրդը կը կարծէր որ զենքը կը պաշարեն նոյն իսկ եկեղեցիին մէջ: Բաւա-

կան սպասելէ ետքը, տեսնը որ ալ ձայն չէր գար դրսէն. մենք ալ լռեցինք և ժողովուրդը հանդարտեցուցինք: Սակայն հետևեալ օրը, բաւական թուով ընտանիքներ, գիշերուան դէպքէն վախցած, եկեղեցիէն դուրս ելան ու ցրեցան ուրիշ գիւղեր: Անոնց հետևեցան ուրիշներ ալ, որոնք՝ հակառակ մեր խնդրանքին, ելան գացին: Այսպէս սկսաւ եկեղեցիէն դուրս ելելու փափազը: Մարապետն ու իր հաշակալ Խաչիկ Քիւլահեանը եկեղեցի եկան ու յորդորեցին ժողովուրդը, որ դուրս ելէ. մենք սպառնացինք անոնց և ստիպեցինք, որ դուրս ելեն: Նոյն օրը Խաս-գիւղ եկաւ Քարթոզիմէսին ձագը, Արիստակէս վարդապետը, որ եկաւ ըսաւ ժողովուրդին թէ, շնորհիւ վեհափառ սուլթանին կատարեալ անդորրութիւն և ապահովութիւն կը տիրէ ամեն տեղ. պէտք է ամեն մարդ իր տունը երթայ. սուլթանը ամեն բան պիտի հոգայ: Ժողովուրդը մեծամասնութեամբ մերժեց, և Արիստակէս ստիպեցաւ առնել քալել: Կառավարութիւնը տեսնելով, որ ժողովուրդէն մաս մը դուրս կ'ելլէ և մեծ մասը կը մնայ եկեղեցիին մէջ, սկսաւ հնարքներու դիմել: Նախ սպառնաց ըսելով որ հացէ պիտի կտրէ, եթէ դուրս չելլէ ժողովուրդը. յետոյ Քարթոզիմէսը զրկեց Աստածածնի երկուշաբթի օրը: Տեղապահը բեմը ելաւ, կոկորդիլոսի արցունքներ թափելով՝ իր տիրոջը, Համիտին, և իր ցաւակցութիւնները յայտնեց ժողովուրդին: Սիրելի Խաս-գիւղցիներ, իմ վեհափառ տիրոջս գացի, ձեր մասին խօսեցայ. խորին ցաւակցութիւն յայտնեց, և իր հայրսինամ հոգածութեանը իբր ապացոյց՝ 1200 ոսկի յանձնեց ինձի՝ ձեզի տալու համար: Իմ վեհափառ տէրս ամեն միջոց ի գործ դրաւ երկրին անդորրութիւնը վերահաստատելու համար. ուստի կը հրաւիրեմ ձեզի, որ դուրս ելլէք, տուններդ երթաք. ձեր ամեն կորուածները պիտի փոխարինուին:

Ժողովուրդէն շատ քիչեր ընդդիմացան, մինչդեռ մեծամասնութիւնը դուրս ելելու կը փութար: Ընդդիմացողներէն ոմանք կը պոռային՝ «սրբազան, ի՞նչ ընենք տուն երթանք. ո՞չ անկողին ունինք, ո՞չ կարասի, պատուհաններն ալ կտորած են. չոր տախտակներուն վրայ ի՞նչ ընենք»:— «Հայրս կուզեմ ես, սրբազան, հայրս ո՞ւր է»: «Մենք չենք կրնար դուրս ելլել, վստահութիւն չունինք քու տիրոջդ վրայ, որովհետեւ ան մեզի կը կտորէ կոր»:

Տեղապահը այս ընդդիմութիւնը տեսնելով՝ սկսաւ աղաչել, պաղատիլ. բայց ի զօր. մերժողական պատասխանները հետզհետէ կը շատնային: Ստիպեցաւ եկեղեցիէն դուրս ելլել, և Քալֆասան որբանոցը գնաց: Քիչ մը ետքը, մարապետը, Խաչիկ Քիւլահեանը, Ռէթէոս Թադէոսեանը, Գրիգոր Ադամեանը և Քապուճճի Օննիկը եկեղեցի եկան և սկսան ժողովուրդը համոզել որ դուրս ելլէ: Մենք «դուրս մի՛ ելլէք» կը պոռայինք, անոնք «դուրս ելլէք, կառավարութիւնը այնպէս կըսէ կոր, եթէ չելլէք, հաց չպիտի տայ և եկեղեցին պիտի պաշարէ», կըսէին: Ժողովուրդը մեծամասնութեամբ անոնց կողմն էր, որովհետեւ հացը անոնց միջոցաւ կուգար: Անթութիւնը կստիպէր զինքը, որ բռնութեան տուալ խոնարհէի: Կառավարութիւնը լուր տարածեց, թէ բոլոր կարասիները իրենց տէրերուն պիտի վերադարձին, թէ թիւրքերուն և թէ հրեաներուն տուները կը խուզարկին և կահկարասիները դուրս կը հա-

նեն կոր: Միամիտ ժողովուրդը, ոչխարի նման սկսաւ դուրս ելլել և կտոր բրդուճ բաներ կեկեղեցի բերել, իբր կարասի: Ի՞նչ էր առածը:

Կտորած պառններ, պարապ սնդուկներ, լաթի կտորներ, ջարդուփշուր եղած հայելիներ, հին սէտիրներ և այլն: Կորուստին 1000-ին մէկը չի կար: Հապա անձի կորուստները. անոնք ո՞վ պիտի տայ... Օ՛հ, ատի մոռցած էր ժողովուրդը, որ հիմա հաց ու կարասի կը փնտռէր միայն: Այսպէս սկսաւ ժողովուրդը դուրս ելլել ու ներս մտնել: Ալ եկեղեցիին դուռը բաց էր, ամեն մարդ արձակ համարձակ կը մտնէր կելլէր: Երեք ընկեր-երը տեսնը որ ժողովուրդը մեր բոլոր յորդորները, մեր բոլոր աղաչանքները ու յանդիմանութիւնները մոտիկ չընեն, ժողովեցինք զէնքերը ու ապահով տեղեր պահեցինք և առանց մէկուն բան մը ըսելու՝ գիւղէն հեռացանք: Արդէն մեր մեկնելէ առաջ, Մարապետը, Քիւլահեանը և Փապուճճի Օննիկը մեզի կառավարութեան մասնած էին՝ ըսելով թէ այս ինչ անուսով տղաքները խռովարարներ են, որոնք ժողովուրդը կը դրդեն, որ դուրս չելլէ: Մեր մեկնելէն ետքը իմացանք, որ ժողովուրդին փոքրամասնութիւնն ալ եկեղեցիէն դուրս է ելել, ուր մնացեր են միայն անտուն, անտէր դաւառացիները: Առտու մը կանուխ զինուորները կը պաշարեն եկեղեցին, կը մտնեն ներս և գաւառացիները ժողովելով՝ կը տանին բանտ... Այնուհետև եկեղեցին քանի մը անգամ կը խուզարկեն, կըղմինաները կը դարձնեն, խորանը կը քակեն, գետնի տախտակամածներն ու քարերը կը հանեն՝ ուսմբ ու զէնք գտնելու համար. սակայն ոչինչ կը գտնեն: Այլ ձերբակալեն շատ մը երիտասարդներ, չափահաս տղաքներ և տարիքոտ մարդեր, որոնց մէջ կը գտնուին եկեղեցիին ժամկոչները: Պետրոս ժամկոչը, Ծեծի ու չար-չարանքի չկրնալով դիմանալ, կստիպուի խոստովանիլ, թէ ինք պահած է զէնքերէն և ուսմբերէն մաս մը: Զերբակալելէն երեք օր ետքը ստիկաններու զինուորներու և լաղձիներու ընկերակցութեամբ, եկեղեցի կու գայ, կը ցուցնէ զէնքերն ու ուսմբերը պահած սեղը, ուրկէ կը հանեն 8 ուսմբ և քանի մը տորձանակներ:

Հիմա խառնուրդի երիտասարդներէն շատերը, ճիւղ կառավարութեան ձանկին տակ չիյնալու համար, ստիպուած են Պոլսէն փախչիլ և ապաստանիլ արտասահման: Իսկ գիւղը մնացողները մեծ մասամբ կրներ, օրիորդներ ու մանուկներ, կառավարութեան որոշումովը ցրած են կամ իրենց տուները, և կամ ամիրաներուն լուշոր տուները, որոնցմէ խրաքանչիւրը 30-40 ընտանիք կը պարունակէ: Կառավարութիւնը բարեհաճած է քանի մը օր չոր հաց շնորհել՝ հետզհետէ քանակութիւնը պակսեցնելով և կալէթայի վերածելով: Փրանսական և Անգլիական զեռպանատներն են, որ հիմա կը զրկեն հաց, խահէ, շաքար, նպարեղէն և այլն:

Ն Ա Ս Ա Կ Տ Ի Վ Ր Ի Կ Ի Յ

17/29-ին սեպտեմբեր 96 թ.

Կրակ են ձգել կայրին մեր աշխարհ...
Թուես 10 օր առաջ հայաշատ Ան քաղաքը սրի հըի

ճարակ դարձաւ: Բազմաթիւ կանայք ու աղջկերք պատիւնին փրկելու համար՝ իրենք զիրենք հիւրընկալ եփրատի ալեաց յանձնեցին: Մանրամասնութիւններ կը պակսին:

Նոյն բախտին մասնեցաւ Բինկեան գիւղը, երեք անշան տներ միայն ազատեցան: Սպանածների թիւը 30 է. ողջ մնացողները մերկ ու անօթի լեռներն են ապաստանած:

Այրեցին նաև Կասմա և Զիմառս գիւղերը. ամեն մի գիւղը 20-30 հոգի զոհ տուաւ. ազատողները նոյնպէս անտուն ու անտէր կը թափառին:

Անց օր առաջ պաշարեցան Տիփթիկի արևմտեան կողմը գտնուող Օտուռ, Ալուէն և ուրիշ մի քանի հայ գիւղեր. Տիփթիկն ալ զարհուրեցաւ. քաղաքի և գիւղերի բնակիչները լեռներն ապաստանեցան: Թրքաց խորհուրդն էր մեզ բողոքովն ոչնչացնել, բայց շնորհիւ քաղաքապետին, որ մի բարի մարդ է և համոզումով հակառակ պալատի արդի քաղաքականութեան, խուժանը չկարողացաւ իր դժոխային ծրագիրը իրագործել, հակառակ պալատէն արձակած բացարձակ հրամաններուն: Թողութուրդը ապահոված իր տեղը վերագրածաւ: Հատերը կուզեն գիւղերէն ցրելը բայց ոչ գը չի կրնար տեղէն շարժիլ թէ վախէն և թէ կառավարութեան արգելքներէն:

Ալուէն գիւղի մէջ Փալանդացի ջրաղացպան Մինաս Էմին ջրաղացքի անպարն ձգած ու խեղդամահ ըրած են: Քաղաքէն փախչողներէն Հուլանեան Պողոսը, Ճըզեկեան Գասպարը և Թորոս վարժապետի տղան սպանեցան Փուռնձորի մօտ. կառավարութիւնը ոչ մի ձեռնարկ չըրաւ չարագործները գտնելու համար:

Թ Ի Ի Ր Գ Ի Ո Յ Ե Ո Ի Ր Զ Ը

Չորս դար տալ Քրիստոսացի մեծ կատակեղանք սա տողերը կը գտնուին «Թիւրքը խեղճ չունի».-«Թիւրքը խի՞ղճ ունենայ»: Մոլեթի այս խօսքերը, ոչ տարծիկ ժողովրդին, սակայն տարծիկալիս ըէժիմիւ ամբողջ փիլիսոփայութիւնը կամփոփէ իր մէջ: Չորս դար առաջ, չորս դար յետոյ ալ Մոլեթի խօսքերը իրենց այժմեութիւնը պիտի ունենան գուցէ: Այն թրքաստեղծները, որոնք կը նկատին թիւրք կառավարութեան պաշտպանողականի դեր կատարել և կը կրտչին անոր անցեալին վրայ ակնարկ մը նետելէ, որովհետև այդ անցեալը սուրի և կոտիտ ուժի զագիւր բռնակալութիւնը եղած է. «զըլմըմըն հագզը մըր»՝ ահա իրենց քաղաքականութիւնը: «Մէշմէրէթ», թիւրք ազատական օրկանը, ցուցնելու համար, թէ թիւրքեան ալ մարդկութեան ծառայութիւն մատուցած է, ակամայ կը գրէ, թէ թիւրքեան կրօնական ներդրումներն սրբաբաններ կուլ չէ աւած, իրաւ է, որ թիւրքեան հազարաւոր քրիստոնեաներ կուլ չէ աւած, որ սկզբունքները արեւը անխառն մտացած է.-«պատմութիւնը եւ դիտողութիւնը հակառակ պիտի ապացուցանեն: Ցաւալի չէ», որ 500 տարւամբ վ ի թ ի ս ր ի պետութիւն մը այսպէս անվարտի կը ներկայանայ քաղաքակրթութեան ատենին առջև: Թիւրք պետութեան պահանջներն կողմը պարտաւ է, իսկ պարտքին երեսը կը փայլի վարպետութեանց, անօրէնութեանց տեսակներով և իրենց ստորաբաժնուներով:

Մինք իրեն հաւատակ ժողովուրդ այդ անսիրտ կառավարութեան, քանակն է մինք աւելել-լաւ կը ծանշանայ անոր հոգին ու անոր ձգտումները: Մենք մեր ձեռքով կը շօշափեմք այն անբարեկէ իրազ-

կնոք, որով վարակած էր այդ երկիրը: Երբ Տաճկաստան ըսելով կը հասկցնի Եւրոպա, եւ Եւրոպա ըսելով ամբողջ կայսրութիւն մը, երբ յուլիան մը կամ հացկատակ մը այնքան կամայականութիւն ունի երկիրն վրայ, որքան ամբողջ ժողովուրդը, երբ վիճակներ կան ազգաբնակչութիւնները հալածելու, կեղծելու համար, քան երկիրը պաշտպանելու, երբ կրթութիւն ըսելով կը հասկցնի նենգամտութիւն ու դաւաճանութիւն, որուն տխուր մարմնացումն է այսօր համարը, քնակաւն է այդ երկիրն մէջ չեն կրնար իւրաքանչիւր ազնիւ հոգններ, աշնի ծգտումներ ու իղծներ, այլ կը դառնայ զազանակաւ կիրքերու, հակումներու անսօարձակ սուսարեգ: Եւ այդպէս ալ է: Թիւրք կառավարութիւնը մինչև այսօր կը նկատէ Տաճկաստանը ահազին սագարակ մը, ինք ազարակատէր եւ ժողովուրդը հլու ստրուկ, որ ո և է քարոյական իրաւունք չունի խոտվել իր վեհապետին զիշերները...

Եւ դեռ կան անմիտներ, որոնք այսօրինակ կառավարութեան մը ներքեւ կը հաւատան Թիւրքի վերակենցաղման:

Վիճմնայի «Նէյ Փրայէ Բեթսէ» կը գրէ «40 տարի առաջ Բալիզի վեհաժողովը յուսարով, որ թիւրքեան կարող է Եւրոպական քաղաքակրթութեան շաւղին մէջ մտնել, Եւրոպական տէրութեանց մէջ մտցուց զայն: Վեհաժողովը մեծ սխալ մը գործեց: Թիւրքեան դեռ այն բարբարոս տէրութիւնն է, ինչ որ էր երբեմն: Թիւրքեան արժանի չէ Եւրոպայի պաշտպանութեան եւ թէ ոչ մէկ տէրութիւն յամեն կամէ այդ արեւնիզակ կառավարութիւնը պաշտպանելու նախատինքը»:

Այս կարծիքը ընդհանուր է, սակայն դեռ չէ հնչած այն ժամը, ուր արդարութիւնը՝ անպատրուակ ներկայանայ իր անողոր դատաստանով: Մենք կապրինք փոխանցման ջրման մը մէջ, ուր քաղաքագիտական իտարականանքներու եւ ընկերային արդարութեան ծգտումն մէջ խուլ մաքառում մը կայ: Դիւանագիտութիւնը ակամա դատարմէ մեծին դարու անկրաւ, շահամոլ սկզբունքին մեջա քմիծաղով կը նայի տառապող և քնալինջ եղող ժողովուրդներու վրայ, ան կընդունի թէ հալածանքը, անգութութիւնները անբարձան են կեանքի պայքարէն, որով լռելեայն կուզէ հակցնել թէ «իտարութեան հօրինէն»: Ընկերային բարեշրջման հոսանքը կարծես չազդեր դիւանագիտական բեմին. մարդ երբ հոն կը բարձրանայ կը կուլէ իր սիրտը, այդ բեմին վրայ վերջ կը գտնեն հոգի և սրտի ամեն վեհամտութիւն, ամեն թրթռում:

Մենք իրաւունք ունէինք, կը մինչև այսօր դիւանագիտութեան վրայ լիակատար յոյս չէինք դնել. Ռիշիեօէն սկսած, Պիքնսֆիլտ եւ Պիսմարք եւ դեռ ուրիշներ կը ղեկավարէին մատակի շահերով, փառասիրութիւններով: Մարդկութիւնը բարձր ատոնց համար ցնորք է. վագրը իրաւունք ունի բազմել ո և է կենդանի՝ իր գոյութիւնը պահպանելու համար, Պիքնսֆիլտ ալ իրաւունք ունի ոտնակոխ ընել ազգերու իրաւունքը Գերմանիոյ մեծութեան համար. Փրանսան իրաւունք ունի: Ալգաս Լորէնի համար, Գերմանիայէն վրէժ լուծել, բայց հայը իրաւունք՝ չունի իր խողովուրդը եւ իր քաղաքները, իր գետնաբարձ զոյրութեան վրէժ լուծելու: Եւրոպական վիթխարի պետութիւնները իրաւունք կուտան իրենց բարբարոս թողալուները չունի անմեղներու վրայ, որուն մէջ արդարութեան ամբողջ օրինակներ մը կը գտնեն, այլ հայը անիրաւ է ծայրայեղ վրէժնորութեան դիմելով: Թշառը ամեն տեղ թշառ է:

Պոլսոյ կրիւր անգամ մ'ալ դիւանագիտութեան ծակտին զարկաւ սա ճշմարտութիւնը, թէ վտանգաւոր է ազգերու ծակատազրին հետ խաղալ: Ծարբերութիւնը «կառ կամ ուշ»-ին մէջ է միայն եւ միանգամայն այդ դէպքը, որ դարուս ամենէն եզակի և խնդրաւիտ եղելութիւնն է թերեւ, փոքրաքար մը եղաւ ընկերային քաղաքակրթութեան արտիճանին: Եւ մենք կարող ենք ըսել, թէ քաղաքակրթութեան մակարդակը անհուն ելելէ շնոր ունի: Բարոյական աշխարհը չէ գտած իր կառարկութիւնը. տխուր քննազններ կան դեռ հոն:

Երբ Մեզլիոյ ժողովուրդը զայրոյթի տնդոտ հոսանքը ընկած էր, Քրանսան կը լռէր. երբ ազատասէր Զիցիբիան իր անկեղծ, մարդասիրական ծայնիկը կը բարձրացնէր, Գերմանիան եւ Աւստրիան հեգնտ լուրձիւն կը պահէին: Երբ հայը յուսահատ ու անհաւատաւ կրիւր կը մղէր, կըր իր սրբազան հողը կոտորէր իր հարազատ

զաւակնեցու արեւնով: Ռուսիա, Գերմանիա եւ այլն իրենց հաշուելի ոչ կը ընենին, ապազայ ծրագիրներ կը պատրաստէին այդ „քառու- թեան զօրէն“ առիւծի բաժնը իւլելու համար: Անոնք թող ծրագրեն:

* *

Մինչև հիմա եւրոպական քաղաքութիւնը հայկական հարցի մա- սին թերուզէմ կը գրէ, մասնաւորապէս անգլիական մամուլը սիւ- նեակներ կը ներէ անոր: Մենք այդ կարծիքներու թոյնքոյն մէջ տու- հանդիսատեսներ ենք, մեր կուսնին վրայ ամուր կ'աւած. ոչ գո- վեախնորք, ոչ պատասխանք կը մտորեցնեն մեզ մեր սկզբունքէն. մեր քայլերը վճռական են: Մեր դէմ ունինք վայրագ պետութիւն մը, եւ մեր ետեւը մեղի եւ սեմնի քաղաքակրթութիւն մը, ուրիսմ մենք աւելի զօրեղապէս պէտք է կուինք:

Բայց թէ քաղաքացիութիւնը աշխարհի այդ անզգած վիճակը երկար պիտի տեւէ,--որոշ բան մ'ընել կարելի չէ. երեւոյթները մեղմու- թեան տակ չեն իջար. Գաշտօճեհան Եւրոպայէն դուրս Եւրոպա մ'ալ կայ. անոր ծագելը երբ բարձրանայ կ'ընայ տարեւ գոռոզ իշ- իսանաւորները: Եւրոպական ժողովուրդի ծոցէն մրմուռներ կսկսին բարձրանալ, սպասեց որ ահիցս որոտուի փոխին: Անգլիոյ ժողու- վորդը վերէն վար իր բարկութեան շահերը կարճակէ Մեծ-Մար- դաստանի դէմ, բայց քաղաքական ժարմիքը ձեռնարկ կը մտայ եւ իոյս կուտայ ամեն զահաւէժ եւ չեզոք ձեռնարկէ: Ռուսիայի հայկա- կան հարցի լուծման համար միջոցներէն խօսքէ աւելի զործնա- կան միջոց կը խնդրէ: Հայկական կոմունտ հարցը առիթ եղաւ Ազա- տական Նախկին պետին հրատարակելու իր պաշտօնէն: Դուկ Ազադարի իր բարտաւորին բերնով կը յայտարարէր, թէ Նախարարութիւնը համակերպով մէկ տեղ իր ժողովուրդին վարդապետական շարժման, շարժողորհի միջոցներու որոշումներէն. քորի տակէ հասկցնել կուզէ, Բասալի խօսքը շրջելով, թէ „a raison a des raisons que le cœur ne connaît pas“:

Պատմական այդ բնորոշ ցոյցներէն, քաղաքական աղմուկներէն դուրս իրողութիւն մը կը տեսնենք, թիւրքոյ տնտեսական ու քա- ղաքական քայքայումը ու երկրին անիշխանական վիճակը: Սուլթա- նը եւ իր հացակատակները օր առօր զեռնեցնեն ընտելին կը նային. որն հոգ, թէ ինչ վտանգ կ'ապահանայ երկրին, թէ ժողովուրդները զիրար կը յօշոտեն, թէ դժոխային բոցեր կը լափեն երկրին կն- սակամութիւնը:

Որքան կը վատթարմայ երկիրը, որքան զահաւէժուած կը մօ- տենայ, կառավարութիւնը պիտի կը փութացնէ այդ ահելի վայր- կեանք, մասնատակմաներուն եւ քրիստոնեաներուն միջև բացուած վիճոք աւելի խորունկներով: Այդ անդունդէն պիտի թաւալի այն ա- րիւնի հնդեղը, որ սուլթանի սեւ հոգիին սեւ իղէլան է այս րոպէն:

Ամենէն վայրենի կառավարութիւնն իսկ, այսօրինակ ծգնաժամի մէջ պիտի դիմէր սիրաբար քաղաքականութեան, աւելի խոհեմ եւ իմաստուն շրջապայծառութիւն պիտի ունենար. թիւրք կառավարու- թիւնը չունի այդ առաքինութիւն եւ ամեն կերպով կաշխատի իր ժողովուրդին մոլեռանդութիւնը վառ պահել: Վերջերս որոշեց մասնի- տակմաներէն մարդուրիս օ զահեկան առեւել, ըսելով թէ՛ քրիստո- նեաները զինուած են իսլամութեան դէմ, ուստի հարկէ: Օսմանեան բանակը անբացնել իսկ վալիներուն հրաման դրկած է, որպէսզի ա- մենասանգու միջոցներով քրիստոնեաներէն հաւաքեն հարկերը:

Ելեւմտական տազնապը երկրին ծուծը մտած է: Կառավարու- թիւնը այժմ գողութեան եկեր է, եւ անամբ գողութեան: Հայ հա- րուստներէն ընտի փող շրջիւն սկսեր է:

Սուլթանը, այդ ղեկային մարմնացումը, կը յուսար թէ ցարի Եւ- րոպայ այցելութիւնը ամուլ պիտի մար արեւելեան հարցի մասին: Հի- մա՛ որ համաձայնութեան մը աղօտ կասկածը պաշարեր է իր իսլա- մայ միտքը, փութացեր է իր „անսահման բարեսրտութեան“ սպաւոյցը տալ բարենորոգումներու ծրագիր մը պատրաստելով, եւ հաստատ խօսք տւեր Նեխիտովին, թէ այլեւս վճռած է պահանջ- ւած բարենորոգումները զործարկել: Մենք գիտենք, թէ սուլթանի սովորական խաղերն են ատոնը, մինչև որ քաղաքական հորիզոնը, որ երկիւղ կազդէ առայժմ, պարզել. կրք տեսնէ, որ իր կասկածնե- րը անհիմն են, Եւրոպան միտում չունի ո եւ է վճարական քայլ առ- նել, այն ատեն երկուք բարով բարենորոգում եւ ծրագիր:

Մինչ այս մինչ այն, միւս կողմէն այդ բարենորոգմանց ծրագրին հետ ուրիշ մ'ալ կը պատրաստուի, ամբողջ իսլամ ժողովուրդը զի- նելու ծրագիրը. ծայրայեղ դէպքին մոլեռանդ իսլամը միահամուռ ոտքի հանելու եւ ծակատարական կռիւ մղելու քրիստոնէութեան դէմ: Դեպքանները ազդու բողոք տւած են: Բողոք, մեշտ բողոք:

Նեխիտովին սուլթանին տնդեր է բարենորոգմանց ծրագրի մասին: Խալիֆան խիստ կատաղած դեպքանին ընծած լեզւէն, մէջ է բերել ժողովուրդի մոլեռանդութիւնը եւ իր գահուն վտանգը: Դեպքանը ա- պահով է գինքը պայմանով, որ Տարսուսէնը բանայ մարտամաւե- րուն առջեւ: Սուլթանը զայրացած քաշեր է հարմամանց, իր յալի- տնեական երաճութեան վայրը . . .

Պուլտոյ թիւրք մամուլը սամծարձակ կը յարձակի հայոց վրայ եւ բաց է ի բաց կը զրգռէ իսլամ զեռնիկ խուժմանը: Գրաքննութիւնը ամեն թղթուութիւն կընէ ուզածին գրելու. հայ մամուլը պէտք է լռէ սակայն: Թիւրք գեանաքարշ մամուլը կանխելէ հայերը քաղա- քակրթութեան եւ մարդկութեան թշնամի: Խորթ չի- թիւր այդ բա- րեւ թիւրք քաղաքութեան բերնին մէջ: Օսմանեան գրականութիւնը մեծ քայլ մ'առած ըլլալու է այդ օրէն վեր:

Մենք վրէժ կը զոռանք, Եւրոպան հայոց զօրեցու թիւը կարծա- նագրէ պաղարիւնութեամբ, կոզմոսիտ մամուլը արդարութիւն կա- ղաղակէ եւ սուլթանն է միայն, որ կը գործէ . . .

Երբ աշխարհը սոսկումով համակւած է, Հայաստանի ծոցէն շոր խժոճութեան գուժերու արձագանքը կը թռչի Եւրոպա՝ Բիսկանի, Ալի, Ջիսուա եւայն կրակի մէջ են եւ հայութիւնը ընաշինը ու հա- լածական:

Ու այս ահելի տուամին վերջ կուտայ ահելի վրէժեղորութիւնը միայն: Սուլթանը թող ըմբատ ծրագիրներ ձեւէ, Եւրոպան թող ն եր կ ա յ վ ի ծ ա կ ը պահպանել շահայ եւ աշք գոցէ համայն ազգի մը քստմնելի շահատակութեան:

Մենք անողոք կը մտանք սակայն... կամ սուլթ. կանավարութիւնը կամ մերմարդկային իրաւունքները: Ե թէ հարկէ վրէժագոռ հայու- թեան թափը զսպնել, սուլթանի մը գլուխ նետելու է անոր սունկ: Եւ իրաւունք ունինք:

Տ Պ Ա Ի Ռ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե ր

13/25-ին օգոստոս 96 թ.

Օգոստոս 13-ն է. առաւօտեան ժամ 11-ը: Ես ընկերոջս մօտ եմ, այնտեղ կան և ուրիշ ըն- կերներ: Մեր խօսակցութեան նիւթը վաղեան օրն է: Բացի խօսելուց և գործում ենք: Ջրային, շտապողա- կան և տնեղոտ գործունէութիւն. ապագրում և պատ- րաստում ենք պրօկլամացիաները: Վաղը մի ճակատա- գրական և հանդիսաւոր օր է հայ յեղափոխականնե- րիս համար. վճռել ենք մի սարսափելի հարւած հաս- ցնել մեր բռնակալի խախուռ բէժիմին և մի կրակող ապտակ անսիրտ դիպլոմատիային:

Այդ միջոցին ներս է մտնում Աշոտը և մեզ հրա- վիրում ներկայ լինել բանկի վրայ յարձակող խմբա- պեաների ժողովին: Գնում ենք, ճամբին հազար ու մի տեսակ մտքեր են անցնում գլխուս: Առաջին անգամն է, որ մի այդպիսի յանդուգն և մեծ քայլ ենք անե- րու: Գործի յաջողութեան մասին ունեցած կասկածը կրծոտում է մեր սիրտը: Չենք կարողանում բողբոլին

հաւատաւ, որ ստորակ հայ գիւղացին ընդունակ լինի իրագործել մեր յանդուգն ծրագիրը, նոյն իսկ կասկածում ենք, որ մեր գաղտնիքը ժամանակից առաջ կը յայտնուի:

Գործի պատասխանատուութիւնը իր ահագին ծանրութեամբ ճնշում է մեզ, սեղմում մեր ուղեղը և ճընշում մեր կուրծքը:

Վերջապէս հասնում ենք մի մեծ տուն: Մի գրեթէ ալեոր, չորչոր, բարձրահասակ, խորշումած դէմքով մշեցի դիմաւորում է մեզ՝ խորհրդաւոր ժպտը երեսին: Նա սուս ու փուս առաջնորդում է մեզ դէպի վեր. մենք բարձրանում ենք ոլոր մոլոր սանդուխներով, անցնում ենք խաւարամած և մռայլ միջանցքներով. սիրտս տակն ու վրայ է լինում, կարծես սրբազան տաճար մանելիս լինինք:

Վերջապէս մտնում ենք մի սենեակ, խորհրդաւոր խաւարը թագաւորում է և այստեղ զգուշութեան համար լուսամուտները գրեթէ բոլորովին ծածկւած են. յատակի վրայ նստոտած տասի չափ հայ յեղափոխականները հրճանքով ընդունում են մեզ: Այստեղ է և անճորանալի Բաբկէնը, նա իր սոփորական անուշ ժպտը երեսին սեղմում է մեր ձեռքը: Արդեօք Բաբկէնը այդ ժպտը երեսին մտաւ...

Սկսում ենք խօսել. ես ուշադրութեամբ դիտում եմ այն ընկերներին, որոնք վաղը մի հերոսական գործ են կատարելու: Գրանցից մի քանիսը վճռողական և խրոխտ դէմքեր ունին, միւսները սոփորական մարդկանց տպաւորութիւնն են թողնում:

Մենք կարելի եղածին չափ բացատրում ենք վաղւան կատարելիք գործի վեհութիւնը, նրա բոլոր դժուարութիւնները և խրախուսում նրանց:

Մի քանիսը ոգևորում են, նրանք հասկացել են բանի էութիւնը, ատամները կրճատացնում են, աչքերը ուրախութիւնից կրակին են տալիս: Նրանց բոցավառ աչքերում փայլում է վրիժու բոցը. սակայն սոփորական երևցած մարդոց դէմքերը բոլորովին չեն փոխուել: Այդ մեզ վրայ շատ վատ է ազդում:

Ոչ ուրախ, կէս արտում դուրս ենք գալիս այդ մռայլ բնակարանից, ուր մեր ամենամեծ և ամբոսներով փայլալայած գաղտնիքը յայտնեցինք մի տասնեակ մարդկանց: Արդեօք այդ մարդիկը պիտի կարողանան իրենց փրայ առած ծանր խաղը մինչև Գողգոթա հասցնել, ահա այն միտքը, որ սաստիկ տանջում էր մեզ:

Նոյն գիշերը ժողով ունինք Բերայի, Ղալաթայի և լսանկի գործերը ղեկավարողների հետ:

Մտած երեկոյ է. երկու ընկերով գնում ենք Բերայի նեղ-նեղ փողոցներով, երկուս էլ մտայոյզ ենք և բոլորովին խօսելու արամադրութիւն չունինք: Երկար գնալուց յետոյ՝ վերջապէս հասնում ենք մեզ ծանօթ և սիրելի տունը: Ո՛հ, ինչե՛ր չեն կատարուել այդ տանը: Ամեն մի հայի համար այդ տունը տաճար պիտի

լինի, իսկ նրա տիրուհին՝ մի պաշտելի արարած:

Այդ տան պատերի մէջ են կազմել հայ յեղափոխականների ամենասարսափելի ծրագիրները: Այդ տան յարկի տակ հայի ստրուկ զաւակը շանթեր է արձակել բռնութեան դէմ, այնտեղ նա ուխտել է վրէժ լուծել բռնակալ և արիւնխտում սուլթանից: Հայ երիտասարդներ, այդ տան մէջ է արել իր կտակը անմահ Բաբկէնը...

Գուռը ծեծում ենք՝ բացուում է և երևում է մեր պահապան հրեշտակի, մեր պաշտելի հայ քրոջ սեւահեր գլուխը: Լուռ կերպով նա ողջունում է և ճրագը ձեռքին լուռ ու մունջ առաջնորդում է մեզ ծանօթ սենեակը:

Սենեակի այս ու այն անկիւնում նստել են մեր ընկերները. բոլորի դէմքն էլ մի արտասովոր լընութեան դրոշմ է կրում: Նոյն իսկ միշտ ծիծաղկոտ ու զւարճախօս Բաբկէնը էլ լուրջ է այս գիշեր. նրա յօնքերը մի փոքր կիտւած են և ձերմակ ձակատը փոքր ինչ ամպամած: Նա երբեմն աշխատում է ժպտալ և հանաք անել, բայց այդ նրան չէ աջողում: Ըստ երեւոյթին՝ առաջիկայ ձակատագրական օրն ամենքի վրայ էլ ազդում է և կարծես ամենքն էլ իրենց մտքերում ընկզմած՝ ուզում են կեանքի հետ իրենց հաշիւները մաքրել...

Սկսում ենք խօսել: Մեր խօսակցութիւնը շատ ըւրջ է. Բաբկէնը պարզում է, թէ ինչպէս պէտք է յարձակեն բանկի վրայ, որ յաջողութիւնը կատարեալ լինի. նա բոլորովին վստահ կերպով յայտնում է, որ եթէ իր ուզած կերպով կատարեն, գործը կը յաջողի: Գրեթէ բոլորս էլ համաձայնում ենք նրա հետ:

Վերջապէս Բաբկէն, Հրաչ, Գարօ և Աշոտ ստորագրում են բանկից ուղարկելիք պահանջների տակը: Այդ միջոցին բաւական ուշախանում ենք. ասում ենք, որ այդ թուղթը պատմական դօկումենտ պիտի լինի, մեծ դեր պիտի խաղայ հայ ազգի կեանքի վերաբերմամբ: Վերջապէս գործերը վերջացնելուց յետոյ՝ ուրախ և զւարթ սկսում ենք ընթրել: Չմոռնամ՝ ասել, որ այդ օրը Բաբկէնը շարունակ ատրճանակի, դանակի և ուսմբի հետ էր խաղում, մենք բարկանում էինք վրան և ձեռքիցը խլում:

Հացի վրայ մի շէշ գինի ունինք. խմում ենք իրար կենաց, ամեն մէկս մի քանի տաք ու ոգևորւած խօսքեր ասում, վերջապէս Բաբկէնը վերցնում է բաժակը և ամբողջովին զգացմունք դարձած՝ ասում. «Ընկերներ, դիտե՛մ, որ պիտի մեռնինք, սակայն միակ փափագս է, որ ողջ մնացողները աւելի կատաղի կերպով շարունակեն մեր սուրբ գործը, լուծեն մեր հարիւր հազար սրախողտող եղած եղբայրներուն ու քոյրերուն վրէժը և ազատեն մեր դժբախտ հայրենիքը. այն ժամանակ մեր ոսկորներն ալ հանգիստ կըլլան»: Երկուս էլ ենք, որ ողջ մնացողը չի գաւաճանիլ մեր սուրբ գործին:

Բողոքս էլ զգածած և ոգևորած ենք. նոյն իսկ սկսում ենք բաւական բարձր ձայնով ազատ երգեր երգել:

Վերջապէս շատ ուշ է. պէտք է հանդստանալ. բաժանելու վայրկեանը հասել է: Իրար գրկում և պինդ պինդ համբուրում ենք: Ամենքս էլ մտածում ենք, արդեօք կրկին պիտի կարողանանք իրար տեսնել... Ո՞վ կարող էր հաւատալ, որ վաղը, ուղիղ 11 ժամից յետոյ, մեզնից միմիայն Բաբկէնը պիտի զոհէր... Ի՞նչ անփութարինքնի զոհ:

Յուզած և զգածած տուն եմ վերադառնում և իսկոյն անկողին մտնում: Սակայն քունս չէ տանում. անկողինս կարծես մի բոցավառ խարոյկ լինի. ամբողջ մարմնովս այրում եմ. գլուխս արաքում է: Աչքերս փակում և ուզում եմ զօրով քնել, բայց չեմ կարողանում. երեակայութիւնս բորբոքած է: Ահա տեսնում եմ Բանկ-Օտոմանը, նրա վրայ ծածանւում է մի կարմիր դրօշակ, ես ուրախ-ուրախ մօտենում եմ դրօշակին, բայց զարհուրում: Նրա եզմերից արիւն է կաթում. իսկ տակը ընկած է գիւլախորով Բաբկէնը, ատրճանակը ձեռքումը պինդ սեղմած: Սարսափած վեր եմ կենում և ճրագը փռում:

Սակայն լոյսն էլ ինձ չէ ազատում այդ երազից: Ո՞հ, դա երազ չէր, այլ մի տեսիլ. հոգու մի դուշակութիւն:

Ես կրկին մօտենում եմ բանկին, փողոցով արեան գետ է հոսում, շուրջս դիակներով լիքն է. նոյն իսկ ոտքերիս տակ են ընկնում: Հեռանում եմ. ի՞նչ եմ տեսնում... Բաբկէն, Հրաչ, Գարօ—արիւնթաթախ, ճխլւած, կտրուած... մազերս փշաքաղում են. ամբողջ մարմնովս գողում եմ: Վերջապէս մի կերպ լուսացնում եմ:

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե ր
(ՆՈՐՈՊԱԿԱՆ ԹԵՐԹԵՐՈՅ)

— Բարդողիմէոս, ինքնակոչ տեղապահ, երբ կառքով, իր ետեւէն ալ զինւորներով տուն կը վերադառնար եկեղեցիէն, չորս հոգի յանկարծ վրան յարձակեցան սպանելու համար. դժբախտաբար չի յաջողեցան և ձերբակալեցան:

— Երկու կտրիճ հնչակեաններ Աւետիս Քօլօբանի տունը մտնելով, որ մերժած էր դրամ վճարել, հոն դտնւող երկու պահապան ոստիկանները դաշունահար կտպանեն և կը կծկեն: Կառավարութիւնը 300 ոսկի խոստացած է սպանիչները դտնողին: Այժմ իբր թէ ձերբակալած են:

— Թանին կը հեռագրեն, թէ դեպքանները շաբաթ օր Իրան ամենախիստ զեկուցագիր մը յղած են մահ-մեղականներուն վրայ դրած նոր աւելատուրքին հա-

մար, որ, ըստ իրենց, ոչ թէ բանակին սպառազինման համար է, այլ իսլամ խուժանին:

Վրաւի նաև թէ իմամներուն հրաման ղրկած է, որպէս զի հաւատացեալներուն հրաւեր կարգան՝ քրիստոնեաներուն դէմ կազմ ու պատրաստ ըլլալու համար:

— Գերմանական «Լօբալ Անցայկէր»-ի Պոլսոյ թղթակիցը կը գրէ՝ «Սուլթանը Վիլհէլմի նկատմամբ տածած բարեկամութիւնը այնքան հեռուն տարած է, որ մինչև իսկ պատրաստականութիւն ցոյց տւած է ու է վտանգի պահուն Գերմանիոյ կայսեր տրամադրութեան տակ դնել 500,000 կազմ զինւոր:

Հարեմներու բանակը որու տրամադրութեան տակ պիտի դնէ արդեօք: Բարեկամութիւնն ալ ասանկ ըլլալու է:

— Օգոստոս 27-ին Նիւ-Եօրքի մէջ մեծ միթինկ մը գումարեցաւ հայ տարագիրները Միացեալ Նահանգներու մէջ չընդունւելուն առթիւ և պահանջեց, որ Վաշինկթօնի կառավարութիւնը բացառիկ աջքով նախ դժբախտ հայոց վրայ:

Նոյնպէս որոշեց, որ Միացեալ Նահանգաց կառավարութիւնը աշխատի տէրութեանց մէջ համաձայնութիւն գոյացնել Թիւրքիոյ կոտորածներուն վերջ դնելու համար:

Կլատսթօն հեռագրով իր ուրախութիւնը կը յայտնէ, որ հայ ժողովրդէն թողք մաս մը կըրցած է խուսափիլ Մեծ-Մարդասպանի ճիրաններէն, և կը յայտարարէ թէ՛ կատարած սարսափներու կուտակումը, ուր ուրեմն վերջ պիտի տայ այն անհնարին անօրէնութեան, որ կը կոչի Թիւրքիոյ կայսրութիւն:

— Սելանիկի նահանգին մէջ, Գագիս ապստամբապետի խումբը ֆորիցայի մօտ երկար կռիւ մը ունեցաւ թիւրք զինւորներուն հետ: 90 զինւոր սպաննւած են և 8 հոգի ալ դերի բռնւած:

Գագիս առաջարկեր է փոխանակել իր գերիները Մանաստրի մէջ բանտարկած մակեդոնացի ապստամբ բանտարկեալներուն հետ:

Լոյս է տեսել Հ. Յ. Գաշնակցութեան ծրագիրը արեւմտեան բարբառով:

- ՆՈՐՈՍՏԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՅՈՒՑԱԿ
- Ոսկանապատից 1000 բուբ.
- Բուլգ. վարնա քաղաքի «Հայ ժողովրդային Միութիւնից» 288 լև 5 սանտ.
- Աշոտ Մանուէլեանից 100 Ֆր.

Դաշնակցութեան անձանթներից իմողուն է թղթակցութեան և ներատուութեան համար դիմել:
Armène-Gaspar, poste restante, Carouge (Suisse)
Վիեննա, Դաշնակցութեան ազատ տպարան: